## ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արտասահմանից եկած մի վարպետ շինում է պատրաստ և զաքազ այլ ընդունում է լժան ու լաւ քան թէ ուրիշներից, կենդանակերպ ծաղիկներով զանազան տեսակ գերեզմանական արձաններ։ Հավլաբար, Շրաձիանայի վերի ծայրը, ապտեքին կարգը № 32 խանութը։

1—15

Երաժշտական խանութում, որ գտնվում է Արծրունու գալլերէայում, բէատրանի մօտ, երաժշտական իրերով առատությունը շուտով կրձատելու պատճառով, այս նոյեմբերի 6-ից սկսած վաճառվում են սաստիկ արժան գներով նոտաներ, երաժշտական գործիքներ, ջութակներ, ֆլէյտաներ, կլարնէտներ, վիոլոնչելներ, գիտարներ և այլ երաժշտութեան վերաբերեալ իրեր բուլոց մինչև 80 կոպէկ ԶԻՋՈՒՄՈՎ։

1—10

## ԲԱԹՈՒՄԻ
## ԿՕՄԻՍԻՕՆԷՐ
### ԱՐՇԱԿ ԾԱՏՈՒՐԵԱՆՑ

Ընդունում է ամեն տեսակ պատուէրներ, յանձնարարութիւններ և ապաստարան։

8—20

ՌՈՒՍԱՑ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԿՐԱԿԻ դէմ ապահովում է շինութիւններ, ապրանքներ, պահեստներ, գործարաններ գիւղատնտեսական շինութիւններ և մբոխներ։ Կովկասի համար գործակատար Պ. Ռեժանբեկ։ Դրասենեակը գտնվում է Երևանայա հրապարակի վրա քաղաքային տան մէջ առաւօտեան 10—2 ժամը և երեկոյեան 6—8 ամեն օր։ ՓՈԽ-ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐ. Քութայիսում Հ. Գ. Բէժանբեկ, Փոթի Ի. Գ. ՀԱՍԱՆ-ԶԱԼԱԼԵԱՆ, Ախալցխա Գ. ԶԱԹԱԼԲԱՇԵՎ։ Նոյն տեղը ապահովում են ներքին 5% առաջին և երկրորդ փոխառութեան ՏՈՄՍԱԿՆԵՐԸ 55 կ. Ս. Պետերբուրգի Ի. Վ. ԻՆԿԵՐ բանկային տան յանձնարարութեամբ։ (Հ. Հ.)

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Կամար Տէր-Դաւթեանցի „РУССКОЕ СЛОВО“—Նոր դասագիրք ռուսերէն լեզուի, հայ դպրոցների համար, ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ։ Ընդունված է Վրաստանի և Իմէրէթի և Երևանայ թեմերի հայոց բոլոր ուսումնարաններում, նոյնպէս Կովկասի և միւս թեմերի ուսումնարաններից շատերում։ Վաճառվում է Թիֆլիսում բացառապէս „Կենտրոնական“ գրավաճառանոցում։ Գինն է 45 կոպէկ։ Գումարով գնողներին քանակութեան համեմատ զիջումներ կը լինի։ Ցանկացողները պէտք է ուղղակի դիմեն „Կենդրոնական“ գրավաճառանոցին. Тифлисъ. «Центральная книжная торговля»

6—7

Կուկիոյ սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ „Թանգոյեան“ ուսումնարանի վարչութիւնը յայտնում է, թէ նոյն դպրոցումը նշանակված է ամուրդ նոյեմբերի 22-ին առաւօտեան 10 ժամին, նոյն եկեղեցապատկան 12 № կրպակները և սենեակները կապալաւ տալու համար։

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ քան թէ ուրիշ տեղ. ԹԷՅ, կակաօ, ՇՕԿՕԼԱԴ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բօկալներ, թէյամաններ, սուրճօկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուանալու ամաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ՋԳԵՍՏԱԿԱԲՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, մէջքակապներ, կլէօնկա, ԹԱՄՔԵՐ, սանձեր, ուլթներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, երեսսրբիչներ, թաշկինակներ, կանանց գուլպաներ, մարդկերանց գուլպաներ, առալեաթ ատպոն, հոտաւէտ ջրեր, շերբեթ, ցիտրան մանդեգիա, խինայի գինի, պօրտվէյն, խերես, կոնիակ և 1,000 այլ առարկաներ։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։ ՆՈՅՆ ՏԵՂԸ վաճառականներին ՄԵԾ քանակութեամբ ծախվում է ԹԷՅ. պուդերով 40, 46, 52, 58, ր., խակ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., խակ ամենաբարձր թէյը ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ։

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ՉՕԿ-ԲՕՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., րէվոլվերներ 4—34 ր., ԲՈՒԼԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., չեֆիլդի դանակներ 3 ր. 50 կ. գիւժինը, ատրճանակներ կիսապնով, ֆիլտրներ և այլն։ Ամենամեծ պահեստ հրացանների և ռէվոլվերների Թիֆլիսում։

46—100

## ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը Թիֆլիսի քաղաքային բժշկանոցում լինում է 9—1 ժամը։

Ամենայն օր Թիֆլիսի քաղաքային բժշկանոցում ընդունում են հիւանդներին հեռանկար բժիշկները.

Հելգիշ 9—10 ժամը խիրուրգիական, սիֆիլիսական և կաշու հիւանդութիւնների։ Դանիէլբէկով և Լիսիցով 10—11 ժամը ներքին և ջղային հիւանդութիւնների։ Գավրոնսկի 11—12 ժամը մանկաբարձական և կանանց հիւանդութիւնների։ Կուդշինովիչ 12—1 ժամը սիֆիլիսական և ներքին հիւանդութիւնների։ Բացի այդ Գորալեվիչ երկուշաբթի օրերը ներքին հիւանդութիւնների։ Մինկեվիչ երեքշաբթի և ուրբաթ օրերը 9—10 խիրուրգիական հիւանդութիւնների։ Վերմիշև երեքշաբթի և ուրբաթ օրերը 10—11 ժամը ներքին հիւանդութիւնների։ Բէյխ երեքշաբթի և շաբաթ 10—11 ժամը աչքերի հիւանդութիւնների։ Բաբայեվ երեքշաբթի և շաբաթ 12—1 ժամը ջղային և ներքին հիւանդութիւնների։ Քիւշարեանց 1-ն չորեքշաբթի օրերը 11—12 ժամը խիրուրգիական, ականջի և բգային հիւանդութիւնների և շաբաթ օրերը սիֆիլիսի միզային-սեռական օրգանների հիւանդութիւնների։ Տարխանով երկուշաբթի, չորեքշաբթի և շաբաթ 11—12 ժամը ներքին հիւանդութիւնների։ Կինբժիշկ Բորբուլ երկուշաբթի և հինգշաբթի 12—1 ժամը կանանց հիւանդութիւնների։

Օրբելա առաջի ցաւ ունեցողներին ընդունում է իր տանը ամեն ժամանակ աղքատ հիւանդներին բժշկանոցի տեսակով։ Ամեն օր բացի կիրակիից բժշկանոցի մէջ լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար։ Բժշկանոցի գրիչկատար։

Դ. Լիսիցով

## ՐԷՍՏՕՐԱՆԸ
### ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆԻ ՄՕՏ

Մի նոր տիրոջ ձեռքն անցնելով, ստացել է այժմ մի բոլորովին այլ և գեղեցիկ տեսք, ունի ընտիր ՃԱՇԵՐ և ԸՆԹՐԻՔՆԵՐ, նոյնպէս և լաւ ԽՄԻՋՔՆԵՐ։ Գները. շատ էժան են

10—20

ԹԷՅ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ թէյ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ ԹԻՖԼԻՍՈՒՄ, որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ։ Բացի այդ Անգլիական խանութը կշռում է ՄԱՔՈՒՐ թէյ առանց ԹՂԹԻ և ԱՐՃԱՆԻ

81—100

ՀԱՑՈՑ ԼԵԶՈՒԻ, ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ դասեր ընտանիքներում։ ՀԱՐՑՆԵԼ „ՄԸՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ։

Վաճառվում են 15,000 ամաններ առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000 խրուստալի բաժակներ 25 կ. հատը, 10,000 բօկալ և բաժակներ 10 կ. հատը, 10,000 մատուցարաններ և կողպէքներ 15 կ. հատը, 10,000 ասեղ 8—40 կ. հարիւրը, 10,000 պենալներ 5 կ., 5,000 շիշ պօրտվէյն և խերես 1 ր. հատը, 2,000 արշին կլէօնկա 60 կ.—2 ր. արշինը, 2,000 գիւժին մատիտներ և գրչակոթներ 8 կ. գիւժինը, 2,000 ֆ. հնդկական բրինձ 7, 8 և 10 կ. ֆունտը, 1000 ֆունտ լէպէշկա 50 կ. ֆունտը, 600 անգլիական բէվօլվերներ 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, գրագ, տրիկօ, ալբոմներ, ձմեռվայ պալտոներ, գլխարկներ, վարտիկներ, հագուստ կէօգնով։ Ծախվում է ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ։ Նոյն տեղը ծախվում է ծովային ԽՈՏ պուդը 2 ր. 50 կ.։

2—60

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

### ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ
## ԹՈՒՐՔԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ

Սիստեմատիքական ընթացք հայոց միջնակարգ ուսումնարանների համար։ Մասն առաջին (ամբողջ թուերը) ԳՐԻԳՈՐ ՎԱՐԶԵԼԵԱՆ, հրատարակութիւն Բ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ լրագրական գործակալութեան

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.

Վաճառվում է բացառապէս Թիֆլիսում՝ Բ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ։

Ուսումնարանները և գումարով առնողները ստանում են 20% զիջում։

Օտարաքաղաքացիք պէտք է գիմեն հեռաւոր հասցէով. Въ Тифлисъ, газетное Агентство Шавердова.

1—10

ՎԻՆՆԱՅԻ ՄԵԲԻԼ (սեղաններ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փոդոցում կաթոլիկոց փոդոցի անկիւնում Մինասեանց, Տէր-Նիկողոսեանի պահեստում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

101—150

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

Դասագրքեր՝

| | |
|---|---|
| 1. Աղայեանց՝ Ուսումն մայրենի լեզուի, ա. ա. չորր. տիպ. | 20 կ. |
| 2. Տէր-Դաւթեան՝ Русское Слово, հինգկր. տիպ. | 45 — |
| 3. Կոստանեանց՝ Ծաղկաքաղ շրջան Ա. (գրաբար) | 25 — |
| 4. — — — շրջան բ. (նոյնպէս) | 60 — |
| 5. — — — շրջան գ. (նոյնպէս) | 40 — |
| 6. — — — գրաբարի հոլովումն | 15 — |
| 7. — — — գրաբարի խոնարհումն | 25 — |
| 8. Տէր-Յակոբեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն. | 60 — |
| Ընթերցանութեան գրքեր՝ | |
| 1. Աղայեանց՝ Անահիտ, հին գրոյց. | 50 — |
| 2. Ակս. ք. Բագրատունի՝ տասն պատգամք | 25 — |
| 3. Տէր-Միքայէլեան՝ Թղուկ, թարգ. Դօդէից | 50 — |
| 4. Լաղայեան՝ Ահմէդի տօպրակը | 10 — |

## ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ.

Մամուլի տակ են՝ Մանդինեանցի „Նահապետական“ և „Դիւցազնական“ աշխարհները և Տէր-Գևոնդեանի՝ „Մայրենի լեզու“ երկրորդ տարի։

Շուտով մամուլի տակ կը մտնի՝ Սրբազան պատմութիւն հին կտակարանի Հայերէնում։

Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍՏԷՐ, մազերը ամրացնող և նրանց բնական գոյնը վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, ՓՈՍՏՈՎ ուղարկված 2 ր. 49 կոպ. ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ։

Մի և նոյն տեղը ԹԻՆԱՑԻ ԻՒՂ, մազերը ամրացնելու համար, 1 ր. տանը գրեթէ գլխամայ դէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն։

46—100

Дозволено цензурою, Тифлисъ 10 Ноября 1881 года. Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго